

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

Bowers Wilkins LTD-ն ՈԲԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/53 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում  
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի<br>համար | Առաջարկվող ապրանքի    |                 |                        |  |
|--------------------|-----------------------|-----------------|------------------------|--|
|                    | Ֆիրմային<br>անվանումը | մակնիշը         | արտադրողի<br>անվանումը | տեխնիկական բնութագիրը  |
| 1                  | դիգել գեներատոր       | դիգել գեներատոր | դիգել գեներատոր        | Արդյունաբերական դիգելային գեներատորը<br>Նախատեսված է բարձր հզորության<br>Էլեկտրամատակարարման ապահովման համար, ինչը<br>հնարավորություն է տալիս այն կիրառել տարբեր<br>արդյունաբերական և կոմերցիոն ոլորտներում: Այն<br>ապահովում է կայուն և անխափան աշխատանք՝<br>օպտիմալ կատարողականությամբ և<br>արդյունավետությամբ: Սարքավորման աշխատանքային<br>հզորությունը կազմում է առնվազն 1000 kVA (800 կՎտ):<br>Գեներատորի վառելիքի մատակարարման համակարգը<br>ինժեկտորային է, մեխանիկական կառավարմամբ:<br>Լիակատար (100%) բեռնվածության դեպքում վառելիքի<br>ծախսը կազմում է առավելագույնը 250 լիտր/ժամ :<br>Գեներատորը հագեցած է առնվազն 140 լիտր յուղի և<br>230 լիտր հովացման ջրի տարողունակությամբ, ինչը |

թույլ է տալիս սարքին աշխատել երկար ժամանակ առանց լրացուցիչ միջամտության: Վառելիքի բաքի տարողությունը պետք է լինի առնվազն 1000 լիտր: Վառելիքի բակը կարող է լինել ինչպես արտաքին այնպես էլ ներքին տեղակայմամբ: Մարտկոցների համակարգը ներառում է առնվազն 400 Ա հոսանք և ապահովում է 24Վ մուտքային լարում: Գեներատորից ելքային լարումը կազմում է 230/400Վ` 50 Հց հաճախականությամբ: Լարման ավտոմատ կարգավորումը գործում է  $0.5 \pm \%$  ճշգրտությամբ` ապահովելով անվտանգ և կայուն էլեկտրամատակարարում: Գեներատորի պաշտպանվածության աստիճանը առնվազն IP23/H է (IP23/H նշանակում է, որ գեներատորը պաշտպանված է մեծ օտար առարկաների և թեք անկյան տակ ընկնող ջրի կաթիլների ներթափանցումից, իսկ նրա էլեկտրամոնտաժային բաղադրիչները դիմակայուն են մինչև  $180^{\circ}\text{C}$  ջերմաստիճանին), ինչը թույլ է տալիս սարքին աշխատել տարբեր կլիմայական պայմաններում: Այն ապահովված է Self-alert անվտանգության համակարգով, որն ապահովում է վթարային իրավիճակների արագ արձագանք: ՕԳԳ-ն (օգտակար գործողության գործակիցը) առնվազն 92% է` ինչը բարձր արդյունավետության ցուցանիշ է: Սարքը ներկառուցված է AVR համակարգով (PAM), որը թույլ է տալիս գծերի ավտոմատ կարգավորում: Տեխնիկական չափերն են` • Քաշը առավելագույնը 15000 կգ • Ակտիվ հզորությունը` առնվազն 1320 kVA • Աշխատանքային ակտիվ հզորությունը` առնվազն 1250 kVA • Հզորության

|  |  |  |  |   |
|--|--|--|--|---|
|  |  |  |  | <p>գործակիցը՝ առնվազն 0.8 Cosφ գեներատորը պետք է լինի նոր, գործարանային փաթեթավորմամբ, և տրամադրվի 1 տարվա երաշխիքով կամ 600 մոտոժամ անսահմանափակ երաշխիքային և ետերաշխիքային սպասարկումով: Տեղադրումը, մոնտաժը և ապամոնտաժումը պետք է իրականացվի Մատակարարի կողմից: Մոնտաժման համար անհրաժեշտ մալուխների և այլ միջոցների գնահատումը պետք է իրականացվի մատակարարի կողմից և ներառվի աշխատանքների մեջ: Մատակարարման ժամկետը՝ 25-30 աշխատանքային օր: Գեներատորի տեղադրումը համարվում է ավարտված այն ընդհանուր ցանցին միացնելուց և թեստավորելուց հետո: Թեստավորելուց հետո մատակարարը տրամադրում է պաշտոնական գրություն գեներատորի աշխատանքային պատրաստ վիճակում լինելու մասին, որից հետո գեներատորը մտնում է երաշխիքի փուլ:</p> |
|--|--|--|--|---|



## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

Bowers Wilkins LTD в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ПЦЧ-ЕЦДЦПР-25/53 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар     |       |                            |                            |
|------------|------------------------|-------|----------------------------|----------------------------|
|            | фирменное наименование | марка | наименование производителя | технические характеристики |
| 1          |                        |       |                            |                            |